

ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

ISSN 1829-054X



Matenadaran
Mesrop Mashtots Institute of Ancient Manuscripts
and “Friends of the Matenadaran” Benevolent Fund express their
gratitude to “JTI ARMENIA” CJSC
for sponsoring the publication of this volume

Մատենադարան
Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտը և
«Մատենադարանի բարեկամներ» բարեգործական հիմնադրամը
երախտագիտություն են հայտնում «ՋԵՅ ԹԻ ԱՅ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ին
սույն հատորի հրատարակությանն աջակցելու համար



MATENADARAN
MESROP MASHTOTS INSTITUTE OF ANCIENT MANUSCRIPTS

BULLETIN OF MATENADARAN
33

Yerevan – 2022

МАТЕНАДАРАН
ИНСТИТУТ ДРЕВНИХ РУКОПИСЕЙ ИМЕНИ МЕСРОПА МАШТОЦА

ВЕСТНИК МАТЕНАДАРАНА
33

Ереван – 2022

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

**ԲԱՆԲԵՐ
ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ**

33

*Տպագրվում է Մեսրոպ Մաշտոցի անվան
Մատենադարանի գիտական խորհրդի որոշմամբ*

Խմբագրական խորհուրդ՝ Վ. Տեր-Ղևոնդյան (գլխ. խմբագիր), Գ. Տեր-Վարդանյան, Գ. Մուրադյան (պատասխանատու քարտուղար), Կ. Մաթևոսյան, Վ. Թորոսյան, Թ. Վ. Լինտ, Ա. Մուլթաֆյան, Ա. Շահնազարյան, Գ. Գասպարյան, Օ. Վարդազարյան, Ա. Թամրազյան, Հ. Համբարձումյան:

«Բանբեր Մատենադարանի» 33, Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ին-տ. երևան, 2022: 536 էջ (ներդիր 16 էջ):

Հ 33/խմբ. Վ. Տեր-Ղևոնդյան, 2022:

«Բանբեր Մատենադարանի» հանդեսի սույն համարում ընդգրկված են պատմությունը, բանասիրությունը, արվեստին և բնագիտությունը նվիրված հոդվածներ, երիտասարդական 7-րդ գիտաժողովի (2021 թ. նոյեմբերի 25-27) նյութեր, հրապարակումներ և մի հաղորդում:

**ՀՈՒՅՆ (ԲՅՈՒՉԱՆԴԱԿԱՆ) ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ
ՀԵՏԵՎՈՐԴ ՀԱՄԱՅՆՔԸ ԿԻՒԿԻՎՅՈՒՄ
ԺԳ-ԺԴ ԴԴ. ԿԵՍԵՐԻՆ**

Բանալի բառեր՝ Հույն Ուղղափառ եկեղեցի, Բյուզանդական կայսրություն, Կիրիկյան Հայաստան, Հռոմեական (Հատին) եկեղեցի, Անտիոքի Ուղղափառ եկեղեցի, Անտիոքի իշխանություն, Սիմեոն II Աբու Շաիբ, Նիկիայի հունական կայսրություն:

Ինչպես հայտնի է, հայոց մեջ, սկսած Ե դարից, առկա է քրիստոնեական մի համայնք, որը պատմագրության մեջ ամենատարբեր անվանումներ է ստացել, ինչպես օրինակ «հայ-հռոմեներ», «քաղկեդոնիկ հայեր», «հունադավան հայեր», «Ծաթեր»¹, «Ուղղափառ եկեղեցու հետևորդ» հայեր և այլն²: Դրանք բոլորն էլ պայմանական եզրույթներ են: Հատկապես Հայ Կաթողիկե եկեղեցու

* Ռ. Մելիքյանի անվան պետական ​​​​ֆոլեշ, հոդվածը ներկայացնելու օրը՝ մարտի 10, 2022, գրախոսելու օրը՝ ապրիլի 2, 2022:

¹ Ծաթերի մասին մանրամասն տե՛ս **Ա. Երիցյան**, «Ծաղ ազգը հա՛յ է, թե ոչ», *Փորձ*, 1881, էջ 125-126, **Н. Эмин**, *О цадах. Исследование по армянской мифологии, археологии, истории и истории литературы (за 1858-1884)*, 2-е изд., Москва, 1896, Ալիշան Գ., *Հայապատում*, Վենետիկ, 1901, **Н. Адонц**, «О происхождении Армян-Цатов», *Жур. Мин. Народ. Просвещ.*, 1911, т. 32, с. 238-249, նույնի հայերեն թարգմանությունը տե՛ս *Հանդէս ամսօրեայ*, Վիեննա, 1912, էջ 256-271, «Из “Тактикаона” Никона Дивногорца. Описание греческих рукописей монастыря Святой Екатерины на Синае», т. 1, доп., ред. Б. Н. Бенешевича, ПСБ, 1911, с. 584-588.

² Խնդիր չղներով մանրամասն անդրադառնալ հարցի եզրաբանությանը՝ նշեմք միայն նման եզրույթները լայնորեն շրջանառող բզմաբիվ աշխատություններից մի ֆանիսը. **Н. Я. Марр**, «Аркаунь, монгольское название христианъ, въ связи съ вопросомъ объ армянахъ-халкедонитахъ», *Византийский Временник*, Т. XII, Вып. 1-4, СПб, 1905, с. 1-68, **Р. М. Бартикян**, «О византийской аристократической семье Гаврас [ГАВРАΣ]: Еще раз о цатах (армянах-халкидонитах)», *ՊԲՀ*, 1987, № 4, с. 181-193, շ. **Ֆարքիսյան**, «Հայ-Հռոմեներ (Քաղկեդոնիկ հայերը) հունական պարբերականներում», *ՊԲՀ*, № 3, 2008, էջ 237-260, **В. А. Арутюнова-Фиданян**, «К вопросу об армянах-халкидонитах», *Կրթեր հասարակ. Գիտություններ*, 1971, № 3, с. 85-98, նույնի՝ «Православные армяне в Северо-Восточной Руси», (Древнейшие государства Восточной Европы), 1992—1993 гг., *Москва*, 1995, с. 196-208, նույնի՝ «Армяне-халкидониты: идентичность на стыке этноса и конфессии», (Диолог со временем), *Москва*, 2007, Т. 21, с. 322-344, նույնի՝ «Армяне-халкидониты. Терминология», *Вестник ПСТГУ III: Филология*, 2013, Вып. 5 (35), с. 9-20.

կազմավորումից ու Բյուզանդական եկեղեցուց զատված այլ ազգային եկեղեցիներին հայկական այդ հատվածի հարումից հետո, եղած եզրույթները դառնում են է՛լ ավելի անկատար՝ պահանջելով ամեն անգամ ժամանակահատվածի և տեղի առումով պատշաճ հստակեցում կատարել: ԺԳ-ԺԴ դդ. Կիլիկիայում ապրող բոլոր բյուզանդական ծեսի հետևորդներին, առանց լուրջ բացառությունների, կարելի է համարել Հույն Ուղղափառ եկեղեցու հետևորդ, քանզի հույներից, հայերից, ասորիներից ու նույնիսկ ֆրանկներից կազմված այդ համայնքը ենթակա էր Անտիոքի Հույն (Բյուզանդական) Ուղղափառ պատրիարքությանը և մտնում էր նրա թեմերի մեջ:

Վերջին շրջանում ուսումնասիրությունների մի մասում փորձ է արվում Կիլիկյան Հայաստանի պատմությունը ներկայացնել որպես Արևմուտքի հետ հարաբերությունների առավել «հաջողված» օրինակ: Բյուզանդիայի ու արևելաքրիստոնեական աշխարհի հետ փոխհարաբերությունները կարծես երկրորդվում են, թեև ժամանակի աղբյուրների քննությունը ցույց է տալիս, որ ընդհուպ մինչև ԺԲ դ. վերջ բանակցությունները և երկխոսության ամրապնդումը Բյուզանդիայի հետ՝ մնացել են հայոց արքունիքի, եկեղեցու օրակարգային հարցերից, ապա որոշակի պարբերականությամբ դրանք շարունակվել են նաև հետագայում: Հայ-բյուզանդական բազմաշերտ հարաբերությունների համատեքստում ուղղափառ հայերին վերաբերող հարցերի թնշուկը մինչև ԺԲ դ. վերջ քննության առարկա է դարձել բազմաթիվ ուսումնասիրություններում, սակայն 1198 թ. Լևոնի թագադրությունից հետո՝ Հայ ու Լատին եկեղեցիների առնչություններին վերաբերող խնդիրների առաջնահերթության պայմաններում, ԺԳ-ԺԴ դդ. Կիլիկիայում առկա ուղղափառ համայնքի պատմությունը հայրենական պատմագրության մեջ մնացել է համեմատաբար քիչ լուսաբանված:

Չնայած Լատին ու Հայ եկեղեցիների միություն փորձերին, ԺԳ դ. Բյուզանդական Ուղղափառ եկեղեցու հավատացյալներն իրենց կենտրոնների մեծ մասը պահպանեցին Կիլիկիայում: Դրանք հանդիսանում էին Անտիոքի բյուզանդական պատրիարքությանը ենթակա թեմեր, որոնցից կարևորներն էին Տարսուսի, Անարզաբայի, Սելեկիայի միտրոպոլիտությունները, Մամեստիայի, Ադանայի, Պոմպեյոպոլիսի ու Մարտիրոսուպոլիսի ավտոկեֆալ ամբիոնները³, իսկ մամլուքների կողմից Անտիոքի իշանությունը 1268 թ. վերջնականապես գրավելուց հետո Անտիոքի Ուղղափառ պատրիարքության աթոռներն ամրապնդվեցին առավելապես Կիլիկիայում:

³ Գ. Գազարյան, «Անտիոքի պատրիարհության հայկական թեմերը (Ե-ԻԱ դդ.)», (Արևելյան աղբյուրագիտություն), հ. 2, կազմ. և խմբ. Ա. Ա. Բոզոյան, Երևան, 2020, էջ 389-390, 399-401:

Հռոմի անմիջական մասնակցությունը թագադրությանը վերջինիս համար ցանկալի արդյունքի չհանգեցրեց և կատին եկեղեցին Կիրիկիայում դրանից հետո էլ ունեցավ լուրջ բարդություններ: Կապված 1194-1219 թթ. Կիրիկիա-անտիոքյան հակամարտությունում Հռոմի ոչ միանշանակ դիրքորոշման հետ⁴ Լևոնը սկսեց հետապնդել կատին եկեղեցին, զրկեց այն մի շարք տիրույթներից՝ փոխանցելով դրանք Հունական եկեղեցուն: Նման քայլերի սկիզբը կարելի է համարել 1210 թ., երբ Կիրիկիայում փառահեղ ընդունելության է արժանանում Անտիոքի հունական պատրիարք (մելիտ) Սիմեոն II Աբու Շաիրը⁵ (1206-1242 թթ.): 1211 թ. հունվարի 6-ին պատրիարքը Սսում, Լևոնի և Ռայմունդ-Ռուբենի ներկայությամբ ժամերգություն է կատարում Բյուզանդական եկեղեցու հավատացյալների համար⁶, ապա նրան շնորհվում են Տարսոնում ու Մամիստիայում կատին եկեղեցուն պատկանող որոշ վանքեր և տաճարներ⁷:

Հայոց թագավորի այս ձեռնարկները դրդեցին Հռոմին էլ ավելի բացահայտ բռնելու նրա հետ հակամարտող Տաճարական միաբանների կողմը: 1211 թ. մայիս-հունիսին պապի կոչով Երուսաղեմի թագավոր Հովհաննես Բրիենացու (1210-1225 թթ.) օգնությամբ Տաճարականները հետ բերեցին մի շարք սահմանային ամրոցներ⁸: Հունական եկեղեցու հովանավորությունը հատկապես շարունակվեց 1212 թ. Տարսոնում լատինական արքեպիսկոպոսի մահից հետո, որի մասին վկայում են Իննոկենտիոս III-ի կոնդակները: 1213 թ. մարտին պապը Հայոց թագավորին գրված ուղերձում դժգոհությամբ նշում էր Լևոնի կողմից Տարսոնի կատին եկեղեցու հողերը հույներին հանձնելու մասին. «...Ընդ որում Տարսոնից, ... որտեղ ձեր խոստման համաձայն հիշյալ պատրիարքը (Անտիոքի)

⁴ Վ. Ավետիսյան, «Լատինական եկեղեցու դիրքորոշումը 1194-1219 թթ. Կիրիկիա-անտիոքյան հակամարտության հարցում», *էմիածին*, 2012, համար Ը, էջ 96-101:

⁵ К. З. Мутафян, *Последнее королевство Армении*, Москва, 2009, с. 47-48. Անտիոքի Ուղղափառ պատրիարքները 1100 թ. հետո գտնվում էին Կոստանդնուպոլսում և միայն անվանապես էին կրում տիտղոսը: Ողջ ժԲ-ժԳ դդ. ընթացքում Բյուզանդիան փորձում էր վերականգնել նրանց իրական իշխանությունը և վերադրձնել Անտիոք: Ներառախական պայքարով պայմանավորված՝ Անտիոքի իշխանները ևս երբեմն սրում էին ուղղափառ ու լատին պատրիարքությունների հակասությունները:

⁶ Wilbrandus de Oldenburg, *Peregrinatores Medii Aevi Quatuor*, Leipzig, 1864, p. 177-178.

⁷ B. Hamilton, *The Latin Church and the Crusader States*, London, 1980, c. 12, p. 315. ԺԳ դ. սկիզբին հայ և հույն հոգևորականների սերտ համագործակցության մասին է վկայում նաև այն փաստը, որ դեռևս Թ դ. կեսերին կաթողիկոս Զաֆարիա Զագեցուն Բյուրանիայի Նիկիա ֆաղափի եպիսկոպոս Հովհաննի կամ Վահաննի գրված թուղը 1204 թ. Սսում հունարենից հայերեն հայ եկեղեցու սպասավորները թարգմանել են «սատարութեամբ Նիկեֆոնայ ու Միխայելի ֆահանայից...»: *տե՛ս* Հ. Հ. Ոսկեան, *Յուզակ հայերէն ձեռագրաց Միսիթարեան Մատենադարանին ի Վիեննա*, հ. Բ, Վիեննա, 1964, էջ 271:

⁸ *L'estoire de Eracles empereur* (RHC, Hist. occidentaux, t. 2), Paris, 1859, p. 317-318.

հուսով էր կարգել արքեպիսկոպոս, ... դուք ուժով ամբողջովյամբ հեռացրել էք լատին հոգևորականներին, ... ապա համարձակվել (այն) պարտադրաբար հանձնել որոշ հույներին»⁹: Բյուզանդական եկեղեցու ու կայսրության հետ երկխոսության արդյունքը հանդիսացավ մերձեցումը Նիկիայի հունական կայսրության հետ՝ ավարտվելով 1213 թ. Ռուբեն III-ի դուստր Ֆրլիպայի և Թեոդորոս I կասկարիսի ամուսնովյամբ¹⁰:

Այնուամենայնիվ, 1213-1216 թթ. Լևոնը ստիպված էր գնալու որոշակի զիջումների Հռոմի հետ հարաբերություններում, քանի որ բացահայտ հակամարտությունը սպառնում էր Անտիոքում եղած դաշնակիցների կորստով: Նրա պահանջով պատրիարք Սիմեոն II-ը ընդունեց Անտիոքի լատին պատրիարք Պետրոս II կաթողիկոսի (Իվրեի եպիսկոպես) գերագահությունը: Նման պայմաններում Սիմեոն II-ը մնաց Կիրիկիայում և Անտիոքում մինչև 1217-1218 թթ., ապա տեղափոխվեց Նիկիա՝ մերժելով լատինական հաղորդությունը¹¹: Սակայն հետագա իրադարձությունները ցույց են տալիս, որ Լևոնը շարունակել է ուղղափառ համայնքի հովանավորությունը Կիրիկիայում: Պատահականություն չպետք է համարել թագավոր Լևոնի մերձավորագույն զինական Ադան Պալլի Հույն ուղղափառ եկեղեցու հետևորդ լինելու փաստը: Խնդիր չդնելով ներկայացնել նրա անձի շուրջ եղած քննարկումները¹² նշենք միայն, որ Ադանը ըստ Միքայել Ասորու «Հռոմաց ազգից էր»¹³, իսկ Կիրակոս Գանձակեցիի ավելի պարզ իշխանին անվանում է «Հռոմ դավանանքով»¹⁴: Ադանի հանդեպ վստահության լրջագույն հանգամանք է նրա՝ թագավորության սենեսկալի և Լևոնի անչափահաս դստեր խնամակալությունը ստանձնելու փաստերը¹⁵:

Կիրիկիայում՝ ԺԳ դ., Հույն ուղղափառ եկեղեցու հետևորդ համայնքի մեծ ազդեցության մասին վկայում են նաև 1220-ական թթ. տեղի ունեցած գահակալական կռիվները: Լևոնի մահից հետո Ռայմունդ-Ռուբենը 1220 թ. աշնանը

⁹ **Innocentius III Pontifex Romanus**, (Patrologia Latina), V. 216, № 2, Paris, 1855, «Liber Decimus Sextus. Pontificatus Anno XVI», cap. II (p. 785).

¹⁰ **А. Павлов**, “Синодальная грамота 1213 г. о браке греческого императора с дочерью армянского князя”, *Византийский временник*, СПб, 1897, т. 4, с. 161, 164-165 հմմտ. Հ. Բարթիկյան, «Հայ-բյուզանդական նոթեր», *Տեղեկագիր հաս. գիտ.*, ՀՍՍՀ ԳԱ., 1960, № 7-8, էջ 134-137 և (Հայ-բյուզանդական հետազոտություններ), հ. Ա, Երևան, 2002, էջ 53-56:

¹¹ **B. Hamilton**, op. cit., с. 12, p. 317.

¹² **Հ. Մ. Արշամյան**, «Կիրիկյան Հայաստանի բերդատեր իշխանները, XII դ. վերջին և XIII դ. սկզբին», *ԲեՀ*, 3(84), 1994, էջ 50-53, **S. Grigoryan**, “The Lineage of Adam (Siratan), Regent for Zapēl, Queen of Armenia”, in *M.-A. Chevalier, I. Ortega (dir.), Élités chrétiennes et formes du pouvoir en Méditerranée centrale et orientale (XIIIe-XVe siècle)*, Paris 2017, p. 221-250.

¹³ **Միխայել Ասորի**, *Ժամանակագրություն*, Երուսաղեմ, 1871, էջ 515:

¹⁴ **Կիրակոս Գանձակեցի**, *Պատմութիւն Հայոց*, Երևան, 1961, էջ 187:

¹⁵ **Սմբատ Սպարապետ**, *Տարեգիրք*, Վենետիկ, 1956, էջ 222:

երուսաղեմից նավարկում է Կիպրոս, ապա ափ դուրս գալիս Սելևկիայում ու Կոռնիկոսում¹⁶։ Այստեղ նրան իրենց աջակցությունը շտապեցին հայտնել մի շարք «հայ և հույն իշխաններ», ինչպես նշում է Սմբատ Սպարապետը։ «Հույներ» ասելով այստեղ անկասկած նկատի է առնվում և՛ հույն, և՛ ուղղափառ հայ բնակչության մի մասը, որոնք Տարսոնի, Սելևկիայի, Կոռնիկոսի բնակչության մեջ մշտապես մեծ թիվ էին կազմում։ Քիչ անց նրանց է միանում նաև Կոռնիկոսի տեր Վահրամ Մարաշախտը¹⁷։ Ապստամբ իշխաններն այնուհետև հեշտություն մտան Տարսոն, որտեղ հավաքեցին մոտ 5 հազարանոց բանակ։ Դժվար է ասել, թե «հույն» իշխանների միանալը խոռովությունը կապված էր Ադան պալլի ինչ-որ մտադրությունների հետ, թե ոչ, ստացե՞լ են արդյոք նրանք իշխանի աջակցությունը, սակայն փաստ է, որ 1221 թ. սկզբներին Սուում իսմայիլյանների ձեռքով սպանվում է թագավորության խնամակալ իշխան Ադանը¹⁸։ Նոր հարձակումների մղելով ապստամբներին։ Ադանի սպանության մեջ Միքայել Ասորին մեղադրում է հայ ավատներին, քանզի ըստ ժամանակագրի՝ նա հույն էր, ատում էր հայերին ու մտադիր էր տիրել իշխանությանը երկրում¹⁹։

Տարսոնից ապստամբներն առաջանում են Ադանա, պաշարում Մամեստիան²⁰։ Նրանց դեմ է դուրս գալիս Գունդատաբլ Կոստանդին Հեթումյանը։ Տարսոնում Կոստանդինը բանակցությունների մեջ է մտնում Վասիլ իշխանի հետ՝ համոզելով վերջինիս գիշերը բացել քաղաքի դարպասները²¹։ Անկախ այս հանգամանքներից խոռովությունը չի կարելի համարել Կիլիկիայի ուղղափառ իշխանների ապստամբություն, քանզի նրանք թագավորության քաղաքական կյանքում երբեք դավանաբանական գործոնը չեն դարձրել շահարկումների առարկա և առանձին բացառություններով հանդերձ բավական ինտեգրված էին ընդհանուր միջավայրին։ Ավելին, Հեթումյան տան ներկայացուցիչները, մշտապես լինելով սերտ հարաբերությունների մեջ Բյուզանդիայի ու Հույն Ուղղափառ եկեղեցու հետ (այդ մասին տեղեկություններ գտնում ենք Ներսես Շնորհալու թղթերում²²), ավելի ընդարձակեցին նրանց իրավունքները Կիլիկիայում կատին

¹⁶ *L'histoire de Eracles empereur*, p. 347.

¹⁷ **Սմբատայ Սպարապետ**, *Տարեգիրք*, էջ 223-224, Հեթում պատմիչի ազգաբանական աշխատությունները, (ՄԺ XIII-XVIII դդ.), ֆ. 2, Երևան, 1956, էջ 104:

¹⁸ **Bar Hebraeus**, *Chronography*, trans. **Wallis Budge E. A.**, London, 1932, p. 376, 379, Հեթում պատմիչի ազգաբանական աշխատությունները, էջ 104:

¹⁹ **Միխայել Ասորի**, *Ժամանագագրություն*, էջ 505, 515 հմմտ. Սամուէլ Անեցի և Շարունակողներ, Երևան, 2014, էջ 239, 418:

²⁰ **Bar Hebraeus**, op. cit., p. 380 հմմտ. Սմբատայ Սպարապետ, *Տարեգիրք*, էջ 223-224.

²¹ Սմբատայ Սպարապետ, *Տարեգիրք*, էջ 224, **R. Grousset**, *Histoire des croisades et du royaume franc de Jérusalem*, t. 3, Paris, 1936, p. 266-267.

²² **Մրբայն Ներսեսի Շնորհալույ**, *Ընդհանրական թուղթք*, Երուսաղեմ, 1871, էջ 85-87:

եկեղեցու հաշվին: Առիթը Հռոմի պապի աջակցությունն էր Անտիոքի իշխանին Կիլիկիայի դեմ 1225-1226 թթ. նոր պատերազմում²³: Կոստանդինը հակադարձեց սրան Կիլիկիայի լատին հոգևորականության ճնշումներով. 1226 թ. նա թագավորության տարածքից վտարեց Մամիստիայի և Տարսուսի լատին արքեպիսկոպոսներին իրենց հոգևոր դասի հետ միասին²⁴:

Հեթումի թագադրությունից հետո Կոստանդինը պատվիրակություն առաքեց Հռոմ²⁵՝ ամենայն հավանականությամբ ստանալու համար որդու իշխանության լեգիտիմացման հավաստիացումներ: Այս ձեռնարկը չհարթեց ստեղծված իրավիճակը. Լատին հոգևորականներին Կիլիկիա վերադարձի թույլտվություն տրվեց միայն Հեթում II-ի օրոք (1289-1293, 1294-1297, 1299-1307 թթ.)²⁶: Նույնիսկ 1237-38 թթ. Գրիգորիոս IX պապը (1227-1241 թթ.) Անտիոքի իշխան Բոհեմունդ V-ի (1233-1252 թթ.) խնդրանքով հանձնարարեց հետաքննություն սկսել Հեթումի ու Ջաբելի ամուսնության օրինականության վերաբերյալ, որի շնորհիվ Հեթումը ստացել էր Հայոց գահը, բայց դրան այդպես էլ ընթացք չտրվեց²⁷: Չի բացառվում, որ Հռոմը գիտակցաբար չցանկացավ սրել առանց այդ էլ անբարենպաստ հարաբերությունները Հեթումյանների հետ:

Այդ տարիներին բյուզանդական եկեղեցու դիրքերի վերականգնման լուրջ ցուցիչ էր այն հանգամաքը, որ 1230-ական թթ. Կիլիկիայի ու Նիկիայի կայսրության միջև սկսված երկխոսության մեջ նորից կենտրոնական դիրքում էր Անտիոքի Ուղղափառ եկեղեցու պատրիարք Սիմեոն II Աբու Շաիբը: 1239 թ. վերսկսված բանակցություններում քննարկվում էր նաև Ուղղափառ եկեղեցու և Հայ Առաքելական եկեղեցու միջև հաղորդության վերականգնման հարցը Հեթում թագավորի հորդորներով²⁸: Չնայած այս բնագավառում մեծ փոփոխությունների դրանք չհանգեցրին²⁹, սակայն Կիլիկիայում բյուզանդական եկեղեցիներին, մասնավորապես Չմյուռնիայի շրջանի Լեմոնի Սուրբ Աստվածածնի և Սֆուրնու վանքերին, Նիկեայի կայսր Դուկաս Վատացիսի (1222-1254 թթ.) նվիր-

²³ Իբն Ալ-Ասիր, *Կիակատար պատմություն* (Օտար աղբյուրներ Հայաստանի և հայերի մասին), հ. 11, (Արաբական աղբյուրներ, գիրք Բ), Երևան, 1981, էջ 332-333:

²⁴ B. Hamilton, op. cit., c. 13, p. 340.

²⁵ Sembad le Connetable, *Chronique du Royaume de la Petite Arménie*, (RHC, Doc. Arméniens), t. 1, Paris, 1869 p. 648.

²⁶ *Les Registres de Nicholas IV*, ed. V. Langlois., Paris, 1891, № 6401, p. 859.

²⁷ *Les Registres Grégoire IX*, ed. L. Auvray, Paris, 1896, № 3597.

²⁸ Հ. Բարթիկյան, «Հայ-բյուզանդական եկեղեցական յարաբերությունները փաստաթղթերում. Կոստանդնուպոլսի պատրիարքներ Գերմանոս Բ-ի և Մանուէլ Բ-ի թղթերը Հեթում Ա թագավորին եւ Կոստանդին Ա Բարձրաբերդի կաթողիկոսին», (Հայ-բյուզանդական հետազոտություններ), հ. Գ, Երևան, 2006, էջ 31-32, B. Hamilton, op. cit., c. 12, p. 321.

²⁹ Մ. Օրմանյան, *Ազգապատում*, հ. Բ, մաս Ա, Պէյրուք, 1960, սյունակ 1616-1617:

րատվութիւններին մասին հաղորդումները³⁰ հաստատում են ուղղափառ մեծ համայնքի ազատութիւնների փաստը:

Պատրիարք Միմեոն II-ի գլխավորութիւնը ընդունում էին և՛ Անտիոքի, և՛ Կիլիկիայի, և՛ նույնիսկ Տրիպոլիի բոլոր ուղղափառ հոգևորականներն ու թեմերը: Մինչև 1240-ական թթ. սկիզբը նրա անունը որպէս «Անտիոքի և ողջ Արևելքի պատրիարք» հիշատակվում է բազմաթիվ տեղերում: Այդ տարիներին բազմիցս հռոմեական եկեղեցին պահանջում էր Անտիոքի իշխանից ապահովել լատին հոգևորականութեան գերակայութիւնն Ուղղափառ և մյուս եկեղեցիների սպասավորների նկատմամբ³¹, բայց Բոհեմունդ V-ը չէր ցանկանում զժտվել ազդեցիկ ուղղափառ համայնքի հետ: Արդյունքում Անտիոքի հունական եկեղեցու նոր պատրիարք Դավիթը (մոտ 1245-1258 թթ.) 1245 թ. վերադարձավ քաղաք³²: Բյուզանդական եկեղեցու դիրքերի ամրապնդումը ստիպեց փաստի հետ հաշվի նստել Հռոմի պապ Իննոկենտիոս IV-ին (1243-1254 թթ.). միակ պայմանը Հռոմի գերակայութեան ընդունումն էր, որի դիմաց պապը պատրաստ էր ճանաչել Արևելքի ուղղափառ պատրիարքների իրավունքներն ու վերականգնել նրանց լիազորութիւնները նախկին տիրույթներում: 1246 թ. Արևելք ժամանած լեգատ Լորենցո դել Օրտեն, ապա կարդինալ Օդոն զգալի արդյունքների հասան ուղղափառ հոգևորականների հետ բանակցութիւններում, սակայն նման քայլերը հավանութեան շարժանացան Լատին եկեղեցու բոլոր սպասավորների կողմից: Մասնավորապէս այն բողոքի տեղիք տվեց Երուսաղեմի լատին պատրիարք Ռոբեր Նանտեցու մոտ, որը հասցրել էր իրեն ենթարկել բազմաթիվ հունական եկեղեցիներ ու վանքեր³³: Անտիոք ժամանած նոր լատին պատրիարք Օպիցո դել Ֆիեչիի (1247-1292 թթ.) ու ուղղափառ պատրիարք Դավթի միջև դրացիական հարաբերութիւնները պահպանվեցին. երկու պատրիարքն էլ նստում էին Անտիոքում: Հնարավոր է՝ դա անձնական լավ հարաբերութիւնների արդյունք էր, քանզի արդեն Դավթի հաջորդ Եվթիմիոս I-ի (1258-1275 թթ.) հետ հակասութիւնները սրվեցին և նա ի վերջո ստիպված թողեց քաղաքը: Շատ շուտով 1260 թ., Նիկիայի կայսեր խնդրանքով մոնղոլ խան Հուլավուս պահանջեց Բոհեմունդ

³⁰ *Acta et diplomata graeca medii aevi sacra et profana, Collecta et ediderunt F. Miklosich et I. Muller.*, vol. 4, *Acta et diplomata monasteriorum et Ecclesiarum Orientis*, Vindobonae, 1871, p. 62-63, 142-144.

³¹ **С. П. Брюн**, *Ромеи и франки в Антиохии, Сирии и Киликии XI-XIII вв.*, т. 2, Москва, 2015, с. 426-430.

³² Մանրամասներ տե՛ս **S. Runciman**, *A History of the Crusades*, t. 3, London-New York, 1954, p. 207, 231-233, **C. Cahen**, *La Syrie du nord à l'époque des croisades et la principauté franque d'Antioche*, Paris, 1940, p. 684.

³³ *Registres d'Innocent IV*, ed. **E. Berger**, Vol. 1-4, Paris, 1884-1921, № 3047, № 4051, № 4052.

VI-ից (1252-1275 թթ.) Անտիոքում վերականգնել Եվթիմիոս I-ի աթոռը ինչն անասելի դժգոհություն առաջ բերեց լատին պատրիարքի մոտ³⁴:

Իրադրությունը մեղմելու ու Անտիոքում բախումներ թույլ շտալու նախա-
ձեռնությունամբ հանդես եկավ Հեթում I-ը: 1263 թ. մամլուքների կողմից Անտիոքի
պաշարմանը հաջորդում է Հեթումի և Անարզաբայի արքեպիսկոպոս Տեր-Հակո-
բի գլխավորած պատվիրակության ժամանումը քաղաք³⁵: Հեթումը օգնում է Բո-
հեմոնդին ազատվելու պատրիարք Եվթիմիոսից՝ նրան բռնի տանելով Կիլիկիա:
Սրանից հետո Բոհեմոնդը դիմում է Հռոմի պապ Ուրբանոս IV-ին (1261-1264
թթ.), որը 1263 թ. ամռանը չեղյալ է հայտարարում նրա վրա դեռևս Բեթղեհեմի
եպիսկոպոսի բանադրանքը³⁶: Եվթիմիոսը Կիլիկիայից հեռացավ Կոստանդնու-
պոլիս, որտեղ էլ 1268 թ. ստացավ մամլուքների կողմից Անտիոքի գրավման
լուրը: Նա այդպես էլ չհամակերպվեց Հեթումի կողմից իրեն հասցված անար-
գանքի հետ ու 1272 թ. պաշտպանեց երիտասարդ թագավոր Լևոն II-ի (1270-
1289 թթ.) դեմ բարձրացված ապստամբությունը:

Այս ապստամբության մասին հայկական աղբյուրները գրեթե ոչինչ չեն հա-
ղորդում. կան տեղեկություններ 1271-1273 թթ. տեղի ունեցած այլ ըմբոստու-
թյունների մասին, օրինակ Մոլեոնի տեր Լևոնի ու Ապղարիբի ապստամբու-
թյունը³⁷: Խռովությունը Կիլիկիայում նորից բարձրացրել էին Հույն Ուղղափառ
եկեղեցու հետևորդները, որոնց գլխավորում էր ոմն իշխան Վահրամ: Լևոնն
ապստամբների հետ երկխոսելու նպատակով դիմում է պատրիարք Եվթիմիո-
սին, քանզի վերջինս ուղղափառների հոգևոր առաջնորդն էր Կիլիկիայում: Բա-
նակցելու փոխարեն պատրիարքը կոչ է անում լեոնային ամրոցներից մեկում
ամրացած խռովարարներին պաշարել մինչև վերջ: Վրդովված այս հանգաման-
քից՝ ամրոցի հայ բնակիչները նրանց հանձնում են իշխանությանը: Լևոնը դա-
ժան հաշվեհարդար է տեսնում բոլորի հետ, իսկ Վահրամին ցուցադրաբար սպա-
նում Անարզաբայի միջնաբերդում³⁸: Եվթիմիոսին տանում են Այաս՝ վերջնակա-

³⁴ B. Hamilton, op. cit., c. 12, p. 322-325.

³⁵ Սմբատայ Սպարապետ, *Տարեգիրք*, էջ 241:

³⁶ Ж. Ринсар, *Латинно-Иерусалимское королевство*, перев. с фр. А. Ю. Карачинского, СПб, 2002, с. 350-351, S. Runciman, *A History of the Crusades*, t. 3, p. 319. Ուրբանոս IV-ը Տրիպոլիի եպիսկոպոս Պաուլոս դե Սենիին 1263 թ. հունիսի 24-ին գրված նամակում պատրաստակամություն էր հայտնում չեղարկելու բանադրանքը, եթե եկեղեցուն հասցված վնասները իշխանը հատուցի գործով: Եվթիմիոսի հեռացումն Անտիոքից հավանաբար դրան էր միտված. տե՛ս С. П. Брюн, *Ромеи и франки в Антиохии, Сирии и Киликии XI-XIII вв.*, т. 2, с. 447.

³⁷ Հեթում Բ-ի տարեգրություն, (Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դդ.), հ. 1, Երևան, 1951, էջ 84, 97:

³⁸ Bar Hebraeus, op. cit., p. 527-528.

նապես Կոստանդնուպոլիս ուղարկելու համար: Պատրիարքը մի շարք փորձու-
թյուններից հետո հասնում է կայսրության մայրաքաղաք և մինչև կյանքի վերջ՝
մոտ 1275 թ., մնում այնտեղ³⁹:

Համիլթոնի կարծիքով այս ապստամբությունը կարող էր տեղի ունենալ
1263 թ.⁴⁰ անմիջապես Եվթիմիոսին բռնի Կիլիկիա տեղափոխելուց հետո⁴⁰, սա-
կայն նման թվագրումը հակասում է իրադարձությունը ծանոթ աղբյուրներին,
որոնց հեղինակներ Բար Հեբրեոսը և Պախիմերեսը դեպքերի ժամանակակից-
ներ են. Բար Հեբրեոսն այդ ընթացքում նույնիսկ եղել է Կիլիկիայում⁴¹, ուստի
դժվար թե շփոթվեր: Ինչևիցե, այս խոսվությունը ևս մեկ ապացույց է Կիլիկիա-
յում XIII դ. երկրորդ կեսին ուղղափառ համայնքի նշանակալի կշռի մասին:
Առանձին իշխանները չէին հանդգնի թագավորի դեմ մեծ ապստամբություն
բարձրացնել, առանց զինական ուժերի ու իրենց աջակցող համայնքի: Նրանց
լուրջ կարողությունների մասին է վկայում ոչ միայն Անտիոքի ուղղափառ պատ-
րիարքի անմիջական ներգրավվածությունն այս ամենում, իսկ մասնակի այս
մասին խոսում է նաև 1271 թ. հունվարի 6-ին Լևոնի թագադրության ժամանակ
հույն պատրիարքի ու հոգևորականների, Կիլիկիայի հույն իշխանների ներկա-
յությունը⁴²: նույնիսկ ապստամբների դաժան պատիժները չկարողացան ընկճել
Կիլիկիայում այդ համայնքի հետագա աշխույժ կյանքը: Ավելին, դատելով տե-
ղեկություններից, Կիլիկիայի ուղղափառ հոգևորականությունն Անտիոքի ան-
կումից հետո պատրաստվում էր գլխավորել բյուզանդական եկեղեցու այս հատ-
վածք, ինչը հակասում էր Կոստանդնուպոլսի շահերին. վերջինս իր նպատակ-
ներն ուներ Կիլիկիայի ուղղափառ թեմերի կառավարման հարցում:

1268 թ. Անտիոքի անկումը բնականաբար մեծացրեց Կիլիկիայի ուղղափառ
համայնքի դերը Անտիոքի հունական եկեղեցու ավանդական տիրույթներում,
սակայն գրկված լինելով Բյուզանդիայի անմիջական հովանավորությունից այս
թեմերն այլ հնարավորություն չունեին, քան փնտրելու Հայոց թագավորների
բարեհաճությունն ու անգամ զիջումներ անելու Հայ Առաքելական եկեղեցուն:
Մինևույն ժամանակ ԺԳ դ. վերջին – ԺԴ դ. սկզբին Կիլիկիայի աշխարհիկ ու
հոգևոր իշխանները նույնպես ստիպված էին հաշվի նստելու Բյուզանդական
եկեղեցու հետևորդ խոշոր համայնքի և Կոստանդնուպոլսի հետ, քանզի Կիլի-
կիան ուներ լուրջ դժվարություններ այդ ժամանակաշրջանում, իսկ Բյուզան-

³⁹ Bar Hebraeus, op. cit., p. 528 հմմտ. Georgius Pachymeres, *De Michaele et Andronico Paleologis*, Bonn, 1835, Lib. VI, c. 1, p. 429.

⁴⁰ B. Hamilton, op. cit., c. 12, p. 324.

⁴¹ Լ. Տեղադրություն, *Խաչակիրները և հայերը*, հ. Բ, Երևան, 2007, էջ 329:

⁴² Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԳ դ., կազմ. Ա. Մաթևոսյան, Երևան, 1984, էջ 393:

դիան որոշակի հաջողություններ էր արձանագրում:

Այսպես, 1275 թ. Հույն Ուղղափառ եկեղեցու կիլիկյան թեմերը Անտիոքի պատրիարքի ընտրություններին ներկայացրել էին Անարզաբայի միտրոպոլիտ Թեոդորիտի թեկնածությունը, և միայն կայսր Միքայել VIII-ի (1261-1282 թթ.) միջամտությամբ պատրիարքի աթոռը զբաղեցրեց Կոստանդնուպոլսին ենթակա Թեոդոս Վիհարդունը⁴³: Հաջորդ պատրիարք Արսենիոսը (1283-1284 թթ.), թեև Տրիպոլիի եպիսկոպոսն էր, լավ հասկանում էր, որ առանց Կիլիկիայի ուղղափառ թեմերի հնարավոր չէ պահպանել Անտիոքի պատրիարքությունը: Նրա բացահայտ դիրքորոշումն այս հարցում հանգեցրեց Հայ Առաքելական եկեղեցու հետ հաղորդություն ունենալու և Կիլիկյան թագավորին հարկ վճարելու մեղադրանքների, ու Արսենիոսը կարգալույծ հայտարարվեց Կոստանդնուպոլսի կողմից⁴⁴: Այս քայլը եկրպառակություն առաջ բերեց Անտիոքի պատրիարքությունում. 1287 թ. կիլիկյան թեմերը նոր պատրիարք կարգեցին Պոմպեյոպոլիսի միտրոպոլիտ Դիոնիսիոսին, իսկ մյուսները Կոստանդնուպոլսի հավանությամբ Կիրիլ Տիրացուն⁴⁵: Վերջ ի վերջո, Կիրիլի մահից հետո՝ 1308 թ., Դիոնիսիոսին բոլորը ճանաչեցին Անտիոքի պատրիարք⁴⁶ ընդունելով, այսպիսով, Կիլիկիայի դերը Բյուզանդական եկեղեցու այս հատվածում: Մինչև XIV դ. կեսերը Անտիոքի հունական եկեղեցու պատրիարքի աթոռը զբաղեցրեց ևս մեկ ներկայացուցիչ Կիլիկիայից՝ Մամեստիայի միտրոպոլիտ Դիոնիսիոս II-ը (1316-1344 թթ. միջև)⁴⁷:

Կիլիկիայի ուղղափառ թեմերը Կոստանդնուպոլսին ենթարկելու և բյուզանդական ծեսի հետևորդ հայերի կայսրությունում ունեցած առանձին համայնքի մասին վկայում են Կոստանդնուպոլսի պատրիարք Նսայասի (1323-1334 թթ.) Հայոց կաթողիկոս Կոստանդին IV Լամբրոնացուն (1323-1326 թթ.) և թագավոր Լևոն V-ին (1320-1342 թթ.) գրված նամակները⁴⁸, անկախ այն հանգամանքից,

⁴³ Georgius Pachymeres, op. cit., Lib. VI, c. 5, p. 436-437 հմմտ. Брюн С. П., *Ромеи и франки в Антиохии, Сирии и Киликии XI-XIII вв.*, т. 2, с. 456-461. Թեոդոսը ֆրանսիական ծագման հայտնի Վիհարդուն ընտանիքի շտապիղներից էր և խաչակիրների հետ հայտնվելով Արևելքում հարել էր Հույն Ուղղափառ եկեղեցուն:

⁴⁴ Georgius Pachymeres, op. cit., Vol II, c. 19, p. 56.

⁴⁵ **Նույն տեղում:**

⁴⁶ К. А. Панченко, «Дионисий I», *Православная энциклопедия*, Т. 15. Москва, 2007, с. 308, Joseph (Nasrallah), *Cronologie des patriarches melchites d'Antioche de 1250-1500*, (Proche-Orient Chrétien), 1967, p. 9-11.

⁴⁷ Nicephorus Callistus, *Ecclesiasticae historiae*, (Patrologia Graeca), T. 146, Paris, 1865, lib. XIV, c. 1197-1198.

⁴⁸ *Acta et diplomata graeca medii aevi sacra et profana, Collecta et ediderunt F. Miklosich et I. Muller*, vol. 1, Acta Patriarchatus Constantinopolitani MCCCXV-MCCCCII, Vindobonae, 1860, p. 158-164.

որ Բյուզանդիան, օգտվելով Կիլիկիայի համար ստեղծված ծանր իրավիճակից, այդ պահին փորձում էր հեռու գնալ ու ի վերջո Հայոց եկեղեցին ենթարկել իրեն: Մեջբերենք համապատասխան հատվածները Հրաչ Բարթիկյանի թարգմանությունում⁴⁹. «Ամենահարգելի ...կաթողիկոս Հայոց եկեղեցվո: ...Ձեր կողմից ուղարկված դեսպանները ժամանելով բերեցին այստեղ ...նամակները: ...Բոլորին լսելի կերպով ընթերցելուց հետո ճշգրիտ իմացանք ձեր դարձի մասին...: Այժմ աստված հավեց ձեր սրտերին և հազիվ այդքան ժամանակից հետո ճանաչեցիք ընդհանուր մորը՝ եկեղեցուն, որից ...բաժանվել էիք: Այժմ դուք արհամարհում եք, խորշում եք և բոլորովին դեն եք գցում այն ինչ վատաբար ընդունում էին ձեր հայրերը՝ ի խորտակումն եկեղեցու ուղիղ դոգմաների: ...Անհրաժեշ է որ ձեր սերը և ընդունի, և խոստովանի ուղղափառության դոգմաները և ամեն ինչում հար և նման լինի մեզ: Ձեր այս՝ աստծուն հաճելի ...գործի համար ձեզ ուղարկեցինք տեր Միքայել Կալլիկրինիտեսին, ...վանական տեր Գաբրիելին, այլև այստեղի հայերի մեծահարգո եպիսկոպոսին: ...Ինչ վերաբերում է այստեղի այն հայերին, որոնք հարեցին մեր սուրբ ու տիեզերական եկեղեցուն, ...նրանք այդ կատարեցին ոչ թե որևէ բռնություն կամ ստիպման հետևանքով, ...այլ սեփական կամքով, սեփական նախաձեռնությամբ և ցանկությամբ: Ինչ վերաբերում է նրանց կառավարմանն ու անդորրությունը, ապա այժմվանից իսկ մենք այդ սկսելու ենք, եթե դա ձեզ համար ընդունելի է...»:

1344 թ. հետո Անտիոքի պատրիարքները վերջնականապես տեղափոխվեցին Դամասկոս, քանզի ակնհայտ էր նաև Կիլիկիայի թուլացումը, որն անորոշ էր դարձնում ոչ միայն տեղի ուղղափառ համայնքի ճակատագիրը, այլ ընդհանրապես քրիստոնեական ներկայությունն այդ տարածաշրջանում:

Ամփոփելով ասվածը՝ կարելի է հանգել այն եզրակացության, որ չնայած Բյուզանդիայի թուլացմանն ու Լատին եկեղեցու դիրքերի ուժեղացմանը Մերձավոր Արևելքում XII դ. վերջում, Կիլիկիայում Հուլյն Ուղղափառ եկեղեցու հետևորդ համայնքը շարունակեց իր դերակատարությունը թագավորության արտաքին ու ներքին կյանքում: Ավելին, տարբեր պատճառներով այն ավելի համախմբված հանդես եկավ այդուհետ՝ ցուցաբերելով մեծ հավակնություններ: Անտիոքի խաչակրաց իշխանության թուլացմանն ու մամլուքների նվաճումներին զուգահեռ Անտիոքի Ուղղափառ եկեղեցու առավել խոշոր կենտրոնները

⁴⁹ Հ. Բարթիկյան, «Նոր նյութեր Կիլիկիայի հայկական պետության և Բյուզանդիայի փոխհարաբերությունների մասին», Բանբեր Մատենադարանի, № 4, 1958, էջ 290-295: Նամակների բովանդակությունը գրեթե նույն է. ճշտված են միայն հասցեատերերը, որոնք են՝ համապատասխանաբար «Ամենահարգելի, ամենապատվավոր և ամենաբարեպաշտ կաթողիկոս Հայոց եկեղեցվո» և «Կիլիկիայի, Իսավրիայի և ամբողջ Հայաստանի մեծ թագավոր»:

պահպանվեցին հենց Կիլիկյան Հայաստանում, որի հետևանքով աճեց Կիլիկյան թեմերի դերը Բյուզանդական եկեղեցու համակարգում՝ որոշակի մեծացնելով նաև ուղղափառ համայնքի կշիռը Կիլիկիայում: Այսպես շարունակվեց մինչև XIV դ. 40-ական թթ., երբ մամլուքյան նոր նվաճումներն արագորեն անկման տարան տարածաշրջանի միակ քրիստոնեական երկիրը՝ Կիլիկյան Հայաստանը, ինչին հաջորդեց համայնքի աստիճանական ոչնչացումը:

VAHE AVETISYAN

**THE GREEK-ORTHODOX (BYZANTINE) COMMUNITY IN CILICIA
IN THE 13TH – MID 14TH CENTURIES**

Keywords: Greek Orthodox Church, Byzantine Empire, Cilician Armenia, Roman (Latin) Church, Antiochian Orthodox Church, Primality of Antioch, Simeon II Abu Shayib, Nicaean Empire.

Until the end of the 12th century, negotiations between the Armenian clergy of Cilicia and the Byzantine Church were periodically held on the restoration of church communion, which, unfortunately, did not lead to positive results. After the coronation of Levon II in 1198, Cilician Armenia formally recognized the primacy of the Roman Church. This circumstance did not affect the rights of the Greek-Orthodox population of the country: the community retained its dioceses throughout the kingdom and even managed to strengthen its position after the Hethumids came to power. Following the conquest of Antioch in 1268, the Greek-Orthodox population of Cilicia united even more, taking an active place in the former territories of the Patriarchate of Antioch. It was a small but relatively influential part of the population of the kingdom, represented in all spheres of life, and only from the 40s of the 14th century, when the state was declining, the Orthodox community began to disperse quickly.

ВАЭ АВЕТИСЯН

**ГРЕКО-ПРАВОСЛАВНАЯ (ВИЗАНТИЙСКАЯ) ОБЩИНА
В КИЛИКИИ XIII - СЕРЕДИНЫ XIV ВВ.**

Ключевые слова: Греческая православная церковь, Византийская империя, Киликийская Армения, Римская (Латинская) церковь, Антиохийская православная церковь, Антиохийское княжество, Симеон II Абу Шаиб, Никейская империя.

Вплоть до конца XII в. между армянским духовенством Киликии и Византийской церковью периодически шли переговоры о восстановлении церковного общения, которые не привели к положительным результатам. После коронации Левона II в 1198 г. Киликийская Армения формально приняла главенство Римской церкви. Данное обстоятельство, однако, не привело к притеснениям греко-православного населения страны: община сохранила свои епархии по всему королевству и даже сумела укрепить свои позиции после прихода к власти Хетумидов. После завоевания Антиохии в 1268 г., греко-православное население Киликии ещё больше сплотилось, и стало играть еще более активную роль на бывших территориях Антиохийского патриархата. Оно по-прежнему оставалось значительной частью населения королевства, было представлено во всех областях жизни и только с 40-х гг. XIV в., на фоне упадка государства, православная община быстро рассеивается.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Գագիկ Դանիելյան

Պաշտոնական նամակագրությունը և դիվանագիտական ընձաները
հայ-մոնղոլական հարաբերություններում..... 5

Ստյոպա Պետոյան

Վահան և Սմբատ Դադյանցիների գրահրատարակչական
գործունեությունը Շուշիում 1880-ական թթ. 33

Անի Ոսկանյան

Ադանայի նահանգի հայերի տնտեսության վերականգնման
փորձերը 1910-1914 թթ. 55

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Գլորգ Տէր-Վարդանեան

Յովհաննէս Վ. Զօհրապեանի ձեռագրական և բնագրագիտական վաստակը.
Ինֆնակենսագրականը..... 67

Օվսաննա Խաչատրյան

Գրիգոր Խլաթեցու կաֆաները որպես գանձարանային կաֆաների առաջին նմուշներ..... 91

Հայկ Համբարձումյան

Սննդային մոտիվները «Սասնա ծռեր» էպոսում և հայ
միջնադարյան գրականության մեջ. հերոսների նաշացանկը 105

Գառնիկ Ա. Հարությունյան

«Կտակ շարչարանաց»-ի կամ Ավագ ուրբաթի ֆարոգի՝ Սիմեոն
Ա. Երևանցի կաթողիկոսի խմբագրությունը 133

Հասմիկ Բադալյան

Կիլիկյան Հայաստանի Զորովանքը և գրչական ժառանգությունը 150

Դավիթ Սրկ. Սահակյան

Կրկին «Հանախասպատոմ հառերի» հեղինակի ու թվագրման հարցի շուրջ,
Աբրահամ Տերյանի մի հրատարակության առթիվ 165

ԱՐՎԵՍ

Իվեթ Թաշարյան, Սարա Լափորթ-Էֆթելսարյան

Մատենադարանի նորահայտ նկարագարոյ մի էջ, որպես մշակութային
ազդեցությունների խորհրդանիշ 186

Միրանուշ Բեգլարյան

Թորոս Տարոնացու մանրանկարների պատկերագրության մարիամաբանական հեներ 196

ԲՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ**Ստելլա Վարդանյան**

Քսուֆի և օժանելիֆի պատրաստման հին հայկական դեղագիրը
Քսենոֆոնի «Անաբասիս» երկում 215

Կարինե Մոսիկյան

Մարմնագննական (ֆիզիոգնոմիկական) երկերը Մատենադարանի ձեռագրերում 225

**ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ 7-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ
(2021 թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 25-27) ՆՅՈՒԹԵՐ**

Զոհրաբ Գևորգյան

Թուղթը, առօրեականությունը և հասարակական փոխակերպումները
Կիլիկյան Հայաստանում 248

Գևորգ Ղազարյան

Դոնվիակ պատարագի ավանդույթը Հայ Առաքելական եկեղեցու ծիսակարգում 259

Անդրանիկ Եսայան

Զակամ Գավառը ժէ դ.-ժԸ դ. Առաջին Քառորդին 285

Տիգրան Գրիգորյան

«Աղամի արարումը» թե՛ «Հին ատուրցն Աստուած».
Դանիել մարգարեի վախճանաբանական տեսիլքը Նորավանքում
(վերլուծություն ըստ կանոնական և պարականոն բնագրերի) 299

Շողակաթ Դևրիկյան

Գրիգոր Լուսավորչին ներկայացնող մեկէջյա փորագրանկարները 18-րդ դարում
Կոստանդնուպոլսում տպագրված երեք «Յայմատուր»-ներում 331

Գրեհա Գասպարյան

Նոր Զուղայում նկարագարողված ՄՄ 6772 Ավետարանի մեկ
էջը արևմտաբիստոնեական արվեստի համատեքստում 342

Արմինե Պետրոսյան

Թոչնամարտի թեման Հայաստանի Ժ-ԺԴ դարերի եկեղեցական ֆանդակում.
պատկերագրությունը և խորհրդաբանական եզրերը 353

Վահե Ավետիսյան

Հույն (Բյուզանդական) ուղղափառ եկեղեցու հետևորդ համայնքը
Կիլիկիայում ԺԳ-ԺԴ դդ. կեսերին 366

Հովհաննես Ա. Իգիթյան

Սարգիս Փիլիսոփա Բ-ի կորսված 532-ամյա պարբերաշրջանները.

Վերականգնում մաս երկրորդ. Հայոց շարժական տոմար-պարբերաշրջանը..... 379

Գոռ Գալստյան

Հովհաննես Սարկավագի «Մեկնութիւն տումարիս հայկազնեայ» երկը 425

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ**Անի Առաքելյան**

Հակոբ երեց Ամասիացի (Էմասիացի). հայկական ուշ միջնադարի

նորահայտ բանաստեղծը 445

Տաթևիկ Մանուկյան

Տեր Խաչատուր Քուրտանցին և նրա փերականությունը 476

Վանո Եղիազարյան, Անի Ժ. Ավետիսյան

Մի անտիպ երկլեզվյան տաղ Հովհաննես Թյկուրանցուց 504

ՀԱՂՈՐԴՈՒՄ**Լուսինե Սարգսյան**

Հայ ձեռագրավեստի ուսումնասիրությունը թվային դարում..... 509

Բանբեր Մատենադարանի հանդեսի հոդվածների ձևավորմանը

վերաբերող պահանջներ 525

CONTENTS

HISTORY

Gagik Danielyan

Official Correspondence and Diplomatic Gifts in the Armenian-Mongol Relations (Parts 1 and 2).....5

Styopa Petoyan

Publishing Activities of Vahan and Smbat Dadyants' in Shushi in the 1880s.....33

Ani Voskanyan

The Armenians' Attempts to Revive the Economy in Adana Province Between 1910 and 1914.....55

PHILOLOGY

Gevorg Ter-Vardanyan

Yovhannēs Vardapet (Archimandrite) Zohrapean as Text Critic and Scribe, His Autobiography.....67

Ovsanna Khachatryan

The *Kafas* of Grigor Khat'ets'i as the First Samples in the Collections of Sacred Chants91

Hayk Hambardzumyan

Food Motives in the Epic “Daradevils of Sassoun” and in the Armenian Medieval Literature: Heroes' Menu.....105

Garnik A. Harutyunyan

The Recension of the “Testament of the Passion [of Christ]” or the Sermon of Good Friday by Catholicos Simeon I Erewants'i133

Hasmik Badalyan

Dzorovank' Monastery of Cilician Armenia and its Scriptorial Heritage.....150

Deacon David Sahakyan

Once Again on the Authorship and Date of “The Oft-Repeated Discourses of St. Gregory the Illuminator”: on the Occasion of a Recent Publication by Abraham Terian.....165

ART

Yvette Tajarian, Sarah Laport-Eftekharyan

A Newly Discovered Illustrated Page as a
Symbol of Cultural Influences.....186

Siranush Beglaryan

The Mariological Basis of T'oros Taronats'i's Iconography.....196

NATURAL SCIENCES

Stella Vardanyan

The Ancient Armenian Recipe for Preparing Ointment and Incense
According to Xenophon's *Anabasis*.....215

Karine Mosikyan

Physiognomical Works in the Manuscripts
of Matenedaran.....225

**PROCEEDINGS OF THE 7TH INTERNATIONAL CONFERENCE OF
YOUNG RESEARCHERS (NOVEMBER 25-27, 2021)**

Zohrab Gevorgyan

Paper, Everyday Life and Social Transformations
in Cilician Armenia.....248

Gevorg Kazaryan

The Tradition of the Liturgy Behind Closed Doors in the Armenian
Apostolic Church Rite.....259

Andranik Yesayan

The Province of Zakam in the 17th Century and the First
Quarter of the 18th Century.....285

Tigran Grigoryan

The Creation of Adam or Ancient of Days?: The Prophetic Vision of Daniel
in Noravank' (a Discussion on the Basis of Canonical and Apocryphal Texts).....299

Shoghakat Devrikyan

Full-Page Engravings with Images of Gregory the Illuminator in the
Three Synaxaria Published in the 18th Century in Constantinople.....331

Greta Gasparyan

One Page of the Gospel M 6772 Illustrated in New Julfa in the
Context of Western Christian Art.....342

Armine Petrosyan

Birds Combat Scene in Armenian Church Decoration of X-XIV
Centuries: Iconography and Symbolic Perceptions.....353

Vahe Avetisyan

Greek-Orthodox (Byzantine) Community in Cilicia
From the XIII - to the Middle of the XIV Century.....366

Hovhannes A. Igityan

The Lost 532 Years Calendar-Cycles of Sargis Philosopher the Second.
Reconstruction (Part II. The Armenian Non-Fixed
Calendar and the 532-Year Cycle).....379

Gor Galstyan

The *Commentary of the Armenian Calendar*
by Yovhannēs Sarkavag.....425

PUBLICATIONS**Ani Arakelyan**

Priest Yakob Amasiats‘i (Emasiats‘i):
An Unknown Late Medieval Armenian Poet.....445

Tatevik Manukyan

Ter Khach‘atur K‘urtk‘ants‘i and His Grammar.....476

Vano Yeghiazaryan, Ani J. Avetisyan

An Unpublished Poem by Yovhannēs T‘lkurants‘i.....504

REPORT**Lusine Sargsyan**

Study of Armenian Manuscript Art in Digital Era.....509
Requirements for the articles in the journal of The *Bulletin of Matenadaran*.....525

СОДЕРЖАНИЕ

ИСТОРИЯ

Гагик Даниелян

Официальная переписка и дипломатические дары в Армяно-Монгольских отношениях (части 1 и 2).....5

Стёпа Петоян

Издательская деятельность Ваана и Смбата Дадянцев в Шуши в 1880-х гг.....33

Ани Восканян

Попытки армян восстановить экономику в провинции Адана в 1910–1914 гг.....55

ФИЛОЛОГИЯ

Геворг Тер-Варданян

Рукописное и текстологическое наследие вардапета Ованеса Зограбяна и его автобиография.....67

Овсанна Хачатрян

Кафы Григора Хлатеци как первые образцы жанра в певческих сборниках-гандзаранах.....91

Айк Амбарцумян

Пищевые мотивы в эпосе «Сасна црер» (Давид Сасунский) и в армянской средневековой литературе: меню героев.....105

Гарник А. Арутюнян

Редакция “Завещания страстей...”, или проповеди Страстной пятницы католикоса Симеона I Ереванци.....133

Асмик Бадалян

Рукописное наследие монастыря Дзорованк Киликийской Армении.....150

Диакон Давид Саакян

Вновь об авторстве и времени создания “Многовещательных речей св. Григория Просветителя” (по поводу публикации Абраама Терьяна).....165

ИСКУССТВО

Ивет Таджарян, Сара Лапорт-Эфтехарян

Новооткрытая иллюстрированная страница как символ культурных влияний..... 186

Сирануш Бегларян

Мариологическая основа иконографии Гороса Таронаци..... 196

ЕСТЕСТВЕННЫЕ НАУКИ

Стелла Варданян

Древний армянский рецепт приготовления мази и благовония из «Анабасиса» Ксенофонта 215

Карине Мосикян

Сочинения о физиогномике в рукописях Матенадарана 225

ИЗ МАТЕРИАЛОВ 7-ОЙ МЕЖДУНАРОДНОЙ КОНФЕРЕНЦИИ МОЛОДЫХ УЧЕНЫХ (25-27 НОЯБРЯ, 2021 Г.)

Зохраб Геворгян

Бумага, повседневная жизнь и социальные преобразования в Киликийской Армении..... 248

Геворг Казарян

Традиция Литургии при Закрытых Дверях в обиходе Армянской Апостольской церкви..... 259

Андраник Есяян

Провинция Закам в 17 – первой четверти 18 в..... 285

Тигран Григорян

“Сотворение Адама” или “Ветхий Днями”: пророческое видение Даниила в Нораванке (анализ по Каноническим и Апокрифическим текстам) 299

Шогакат Деврикян

Полнолистовые гравюры с изображением Григория Просветителя в трех сборниках «Синаксария», изданных в XVIII веке в Константинополе..... 331

Грета Гаспарян

Страница Евангелия М 6772 в контексте Западно-христианского искусства..... 342

Армине Петросян

Сюжет с «Борющимися» птицами в церковной пластике
 Армении X-XIV вв.: иконография и символизм.....353

Ваэ Аветисян

Греко-Православная (Византийская) община
 в Киликии XIII - середины XIV вв.....366

Ованнес А. Игитян

Утраченный 532-летний календарный цикл Саргиса Философа второго.
 Реконструкция (часть II. Армянский подвижный календарь и 532-летний цикл).....379

Гор Галстян

Толкование армянского
 календаря Ованнеса Саркавага.....425

ПУБЛИКАЦИИ**Ани Аракелян**

Иерей Акоб Амасийский (Эмасийский),
 неизвестный армянский поэт Позднего Средневековья.....445

Татевик Манукян

Тер Хачатур Куртканци и его грамматика.....476

Вано Егиазарян, Ани Ж. Аветисян

Неизданное двуязычное стихотворение
 Ованнеса Тлкуранци.....504

СООБЩЕНИЕ**Лусине Саргсян**

Изучение армянского рукописного искусства в цифровую эпоху.....509

Требования к оформлению статей в журнале *Вестник Матенадарана*.....525

ԲԱՆԹԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

Հատոր 33

BULLETIN OF MATENADARAN

Volume 33

ВЕСТНИК МАТЕНАДАРАНА

Том 33

Համակարգչային ձևավորումը և էջադրումը՝ Անահիտ Խանգաղյանի
Շապիկի ձևավորումը՝ Մարտիրոս Տոլմանեանի
Շապիկին՝ Թորոս Տարոնացի, Տիրամայրը մանկան հետ, Մատթեոսի
Ավետարանի անվանաթերթ, ՄՄ 6289, էջ 12ա
Սրբագրիչ՝ Արմինե Գրիգորյան
Հրատարակչական խմբագիր՝ Հայկ Համբարձումյան

Տպագրված է «ՔՈՓԻ ՓՐԻՆԹ» ՍՊԸ տպարանում
Ք. Երևան, Ներսիսյան 1
Չափսը՝ 70×100 1/16, տպագրական մամուլ՝ 33,5
տպաֆանակ՝ 150

Մատենադարան

Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտի
հրատարակչական բաժին, ֆ. Երևան, Մաշտոցի պող. 53, հեռ. (010) 513033
publishing.matenadaran@gmail.com

Ամսագրի թվային տարբերակը՝
banber.matenadaran.am/download-category/բանբեր-մատենադարանի/